

Քառասուն օր շարունակ, օրը մի անգամ սառը ջրով լուսնում են զլուխը և այս զեղից նորից քսում:

Բարխսեծ.—Քարի դիպչելուց առաջացած վերք—ծամոն են դնում:

—Թթխմոր կամ չորթան են դնում վերան:

—Յամաք թանը թիկնաքովի տերևների մէջ կլորում են, խորովում, քիչ հոգացնում և դնում վերքի վրայ:

Քարխեծը լինում է երբ վառեկ ելած ձուի կեղևը կոխում են:

—Թթխմորի վրայ ձէթ են քսում և դնում վերան:

Բթից արիւն հոսելիս՝ կարելու համար չորացրած պիտանան, խունկը և շաքարը միմեանց հետ ծեծում են և քթախտի նման քաշում:

—Սարդի ոստայնը քաշում են քիթը:

Հոսոտ.—Խոզի իւղ, ծծումբ, կապոյտ քար և վառօդ հաւասարաչափ վերցնում են, խառնում, օծում մարմինը և գոլ թոնրում նստում:

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՑ

Այս գլուխով հայ ազգաբնակիցի մեծագոյն մասն ևս հաւատում է, որ մահուան օրն էլ ճակատագրով նախասահմանուած է և որ ոչ մի միջոց չի կարող յետաձգել այն: Սակայն փոքրագոյն, համեմատաբար աւելի զարգացած մասն արդէն թերահաւատութեամբ է վերաբերում դէպի այդ ճակատագրութիւնը:

Ցանկանալով գուշակել, թէ հիւանդը կառողջանայ թէ կը մեռնի՝ խնամողները նայում են նրա աչքերին, եթէ ձախ աչքի բիրը հեռո՞հեռէ փոքրանում է, այդ նշան է համարում, որ հիւանդը չի առողջանալու:

Նախասահմանուած օրը Գարրիէլ հրեշտակապետը իջնում է հիւանդի մօտ, կանգնում ոտերի կողմը և, եթէ հիւանդը բարի, առաքինի է եղել, զբարի դէմքով երևում նրան ու առնում հոգին, խսկ եթէ մեղաւոր է եղել, «չար» դէմքով է երևում: Հիւանդը զարհուրում է և խնդրում որ իրեն մի ուրիշ տեղ տեղափոխեն. այդ ժամանակ հրեշտակը անցնում է դէպի նրա սնարը և առնում հոգին:

Հոգևարքը թեթևացնելու համար եթէ երեխայ է՝ մայրը երեք անգամ ստինքը քսում է նրա բերանին, որպէսզի «ծիծը նրան հալալ լինի, խաղաղութեամբ գնայ», իսկ եթէ շափահաս է՝ նրա ոտներին տակ մեղր են քսում, «որ ճանապարհը քաղցր լինի, շուտ գնայ»։ Միայն քչերն են համաձայնում այդ դերը կատարել, որովհետեւ քսողն էլ չի կարող մեռնիլ, մինչև որ մի ուրիշը իրեն ոտերին էլ մեղր չքսի։

Եյդ միևնոյն՝ հոգևարքը թեթևացնելու՝ նպատակով եթէ հիւանդն երկրապործ է՝ խոփը, եթէ դարբին՝ մուրճն ու սալը, եթէ հիւան՝ ուրազը՝ դնում են կրծքին, եթէ հիւանդի սիրելիներինց մինը ներկայ չէ և սա տանջում է նրա կարօտով, վերջինիս շորերը, գաւազանը, նամակը դնում են հիւանդի կրծքին՝ որ հանգստանայ և հոգին աւանդէ։

Երբեմն էլ պատահում է, որ ոչ թէ թեթևացնում են հոգևարքը, այլ «հոգեդարձ» են անում. սաստիկ լացով խանգարում են հրեշտակին հոգին առնելու։ Եյսպիսի դէպքերում հիւանդը ապրում է դարձեալ մի կամ ութ օր, սաստիկ տանջուելով։ Եյդ ժամանակ միայն նկատելով որ հոգեդարձ է եղել, հիւանդին բոլորովին առանձնացնում են և հանգիստ թողնում, որ հոգին աւանդէ։

Մեռած ըտէլին սիրելիներն ընկնում են վերան և սաստիկ լալիս, բարձրաձայն ողբում։

Յետոյ մինը վերցնում է ննջեցեալի գլխի տակից բարձը, եթէ աչքը բաց՝ «աշխարհի ա ըլում», հոգ է ածում, որ կշտանայ, փակուի. եթէ բերանը բաց է լինում, թաշկինակով կապում է։ Սպա հեռացնելով ներկայ եղողներին՝ հանում են հանդերձները, ձեռները կրծքին խաչում, ոտները բամբակի թիւով միմեանց հետ կապում, ձունձի մէջ փաթաթում և երեսը դէպի արևելք դարձնում, ու մի հաց դնում կրծքին։ Եյս հացը պահում են և տալիս մեռելից վախեցածներին ուտելու, որ սրտապնդուին։ Եյս ժամանակ հրաւիրում են քահանային, որ հոգոց ասի։

Երկու կին էլ մի կտաւի կտոր առնելով՝ կանգնում են ննջեցեալի սնարի և ոտների մօտ, կտաւը երեք անգամ մի-

մեանց ձողում «Աստուած ողորմի հողուն» ասելով և ապա ննջեցեալի վրայ շափում ու պատանք կարում։ Աւելացած կտորը փաթաթում են սանը և երեք օրից յետոյ նուիրում ննջեցեալին լողացնողին։

Յետոյ ննջեցեալին լողացնում են, եթէ կին է՝ կանայք, իսկ եթէ տղամարդ՝ տղամարդիկ, սովորաբար երկու հոգի։ Ննջեցեալին դնում են մի տախտակի վրայ՝ երեսը դէպի արեւելք դարձրած և լողացնում նոր բերած ջրով, զգուշանալով որ կուժը, թէ ջուրը բերելիս և թէ լողացնելու միջոցին, ոչ մի անգամ դետին չդնեն։ Նախ լուանում են գլուխը, ապա կուրծքը և ոտները ասելով.

Քարդ քաղած ըլի,

Հողդ մաղած ըլի,

Աջու դասին արժանի ըլես.

Աջդ օշախիդ վրայ քաղցր ըլի.

Մենք էլ քե շմոռանանք:

Օղորմի քի, լիսեղէն էիր լիս դառար.

Ծամբէդ քարի ըլի:

Յետոյ լողացնողները միմեանց ձեռքի ջուր են ածում, լուացում և կուժը այդ տեղում գլխիվայր անկում և երեք օր այդ պէս թողնում։

Ննջեցեալին լողացնելուց յետոյ պատանքում են, պատանք կարում, միայն կրծքի մօտ բաց թողնում ասելով վրան շուլալած, որպէս զի յետոյ եկեղեցում նշխարն ու վարչամակը դնեն։

Ծրխտասարդ ննջեցեալի վրայ նոյն կտորից մի գօտի և մի ուսկալ են կապում։ Ուսկալը անց են կացնում պարանոցով, կրծքի վրայ խաչաձև կապում և ծայրերը ամբացնում գօտիում։

Երեխայ ննջեցեալի ականջների և քթամակերի մէջ և աչքերի վրայ բամբակով փաթաթած խունկ են դնում, ձեռքերին մի մի խաչաձև մօմ տալիս, միայն նախապէս մի մօմը վառում են, յետոյ նրանից միւսը վառում, և ձեռքով հանդցնում առաջինը, ապա կրկին վառում առաջինը և հանդցնում

երկրորդը, յետոյ նորից վառում, երկուսը միմեանց մօտեցնում և միասին հանգցնում:

Ապա դնում են դազադի մէջ և երեքաշը (քիշմիր կամ չիթ կտորից) ծածկում վերան:

Այժմ հետզհետէ ընդհանրանում է ննջեցեալներին հանդերձ ձազցնելու և գլուխը յարգարելու սովորութիւնը: Պահանջում է, որ շապիկն ու վարտիկը անշուշտ նոր լինին. իսկ միւս շորերը ոչ մի անգամ չլուացուած, որովհետեւ առաջտակը հարամ առ, մեղք է:

Դազադը շինում են հասարակ փայտից, կարելոյն չափ թեթեւ, որովհետեւ ալատաստանի օրը շալակելու են այն և այնպէս դատաստան պնակու: Դազադի վրայ քաշում են սև կտոր՝ եթէ պառաւի և կարմիր՝ եթէ երիտասարդի համար է. նոյն գոյնի է լինում և երեսքաշը:

Պատահում է, որ դազադի մէջ դնում են եթէ ննջեցեալը դարբին է եղել՝ մօրճ, եթէ հիւսն՝ ուրազ, եթէ սափրիչ՝ ածելի, մի խօսքով նրա պարագմունքին վերաբերեալ մի որեւէ գործի: Քահանաների կրծքին էլ աւետարան են դնում, և այն էլ, երբեմն, ձեռագիր, կողքին դաւադան:

Քանի ննջեցեալը տանն է, նրա բարեկամներն առանձին-առանձին, կամ միքանիսը միասին քահանայի հետ գալիս են և հոգոց ասել տալիս, իսկ եթէ բարեկամը ինքը քահանայ չի բերում իւր հետ՝ ընդհանրապէս անբիծք չի կատարում:

Սովորաբար ննջեցեալին, եթէ անշափահաս է, նոյն օրը թաղում են, իսկ եթէ չափահաս՝ երեք օր պահում են կամ տանը կամ եկեղեցում: Թէև կան աւելի յետ ընկած դիպքեր, ուր ննջեցեալին մի օր անգամ չեն պահում:

Ննջեցեալին եկեղեցի տանելիս ոչ միայն աղակականներն ու բարեկամները, այլ և բոլոր ծանօթները, հետևաբար ամբողջ գիւղի տղամարդիկ և պառանկները յուղարկւոյրում են:

Ցան մէջ կարգը կատարելուց յետոյ շատերը փաթաթւում են ննջեցեալին, լալիս, ողբ ասում և բարեմաղթում: «Քնացած ճանապարհդ բարի ըլի. դատաստանդ քաղցր ըլի»: Դազադը վերցնելիս նրա տեղը մի քար են դնում, որպէնզի նրն-

ընցեալի «տը ծանդը ըլի օջախին վրայ», և նոյն տանից շուտով ուրիշն էլ չմեռնի»։ Նոյն նպատակով էլ սենեակից հանելիս դադարը երեք անգամ խփում են դռանը և յետ տանում։ Ննջեցեալին եկեղեցում դնում են յատակի վրայ, և ոչ դիպարդի, ինչպէս առհասարակ քաղաքներում, յաճախ նախապէս մի կապերտ սփռելով։

Չափահասների համար սովորաբար պատարագ են մատուցանում, իսկ անչափահասներին և մանաւանդ աղքատներին առանց պատարագ մատուցանելու են թաղում։

Պատարագի միջոցին ննջեցեալի սնարի և օտների մօտ կլիպալար (կերտն) են դնում, մօմ վառում։ Պատուել ցանկացողները նոյնպէս մոմեր են դնում և այդտեղ վառում։

Թաղման կարգը կատարելիս քահանան վարչամակը և մի նշխար դնում է ննջեցեալի բերանի վրայ, այս ժամանակ պատանք կարողը մօտենում է և պատանքի կրծքի բաց մնացած մասը կարում է և ասեղը վերան կոտրում։

Այս միջոցում կանայք շրջապատում են դադարը, չոքում, փաթաթում ննջեցեալին, սաստիկ լալիս և բարձր ձայնով ողբեր ասում երգելով։ Սովորաբար «մայր-ողորց» հանդիսանում է զիւղի մէջ այդ մասում անուն հանած մի կին, ինչպէս օրինակ Օձունում Գիւրգենանց Թալալը, կամ Ճարոյենց Ազիզը։ Սա դրուատում է ննջեցեալի գործերը երգելով և լալով։ Շրջապատող կանայք կրկնում են նրա վերջին խօսքերը, նոյնպէս լալով։

Ահա մի քանի նմուշ այդ ողբերից*).

Մանկան վրայ.

Կարմիր արեւից ընկած, բալայ ջան,
Կանանչ տերեւից ընկած, բալայ ջան,
Տերեւթափոցին թափահարուած, բալայ ջան,
Ջրերի հետ տարուած, բալայ ջան,
Աչքիս լիս տանող, բալայ ջան,

*) Մրանցից մի քանիսը ե. Երզնկեանն է գրի առել։

Մրտիս տայազ¹⁾ անող, բալայ ջան,
 Մեր ֆողին²⁾ փանահ³⁾ անող, բալայ ջան,
 Վայ էս ինչ թաւուր բան ա, բալայ ջան,
 Անզուսնա հրամարաւոր են եկել, բալայ ջան,
 Անմեծիւ մեծարքաւոր են եկել, բալայ ջան,
 Անեհայ շապիք են հագցրել քեզ, բալայ ջան,
 Անկտուր տուն են գնելու քեզ, բալայ ջան:

Շորահարսի վրայ.

Արեգակ (է)իր խաւարեցիր, Մանիշակ ջան,
 Մանիշակ իր թառամեցիր, Մանիշակ ջան,
 Լիանիակ իր բոլորվեցիր, Մանուշակ ջան,
 Վարդի պէս կարմիր բացուեցիր, Մանուշակ ջան,
 Սարերի սաւոր, Մանիշակ ջան,
 Սև քուշուքաւոր¹⁾, Մանիշակ ջան,
 Դեղնածաղկի կարօտ, Մանիշակ ջան,
 Եղածաղկով եղօտ, Մանիշակ ջան,
 Բողբոճ քորոցաւոր, Մանիշակ ջան,
 Սև քուշուքաւոր, Մանիշակ ջան,
 Նաշխուն շոշաւոր²⁾, Մանիշակ ջան,
 Գանանշ քոշաւոր, Մանիշակ ջան,
 Մառնուքը մատիդ, Մանիշակ ջան,
 Բորոցը ճրկատիդ, Մանիշակ ջան,
 Անեղը պաղնեցիդ, Մանիշակ ջան,
 Մկրատը ճրկբիդ, Մանիշակ ջան,
 Խառ³⁾ ու զուճաշը⁴⁾ հագիդ, Մանիշակ ջան,
 Հայլին ըղաքիդ, Մանիշակ ջան,
 Հարգեւոր հարկաւոր, Մանիշակ ջան,
 Ամենքին դիրեկան⁵⁾ սիրեկան ջան:

Շրիտասարդի վերայ.

Թամբած ձիաւոր, որդի ջան,
 Թուխ եփնջաւոր, որդի ջան,
 Իմ սարերի ծաղիկ, որդի ջան,
 Շարմաղ (բարակ) ճակատիդ մեռնիմ,
 Լրիտիկ (գեթ) կաներիդ մեռնիմ,

¹⁾ Ենցուի. ²⁾ հոգին. ³⁾ յոյս գնող.

⁴⁾ քոզ. ⁵⁾ դարդ. ⁶⁾ Թանգաղին. ⁷⁾ շոր. ⁸⁾ համեմ.



Շիրմատ սրտիդ մեռնիմ,
 Զալչալ աչքերիդ մեռնիմ,
 Քո նանը կորել էր
 Քո մահը տեսել չէր, բալա.
 Ինչ քե էր գալու՝
 Ինձ գէր, բալա.
 Բալա, բալա, բալա,
 Անուշ բալա, ջան բալա,
 Իմ սրտի սրտակ բալա,
 Իմ խելօք, ճարտար բալա:

Կարդալ իմացող որդու վրայ.

Հիւանդ տեղդ շուռ եմ տուել,
 Մարաւ տեղդ ջուր եմ տուել,
 Ա՛յ իմ թագաւոր որդի ջան,
 Գրաւոր, դաւթարաւոր որդի ջան:
 Ուսիդ ուրարին մեռնիմ,
 Զեռիդ փուրվարին մեռնիմ,
 Ժանգոտ դալամիդ մեռնիմ,
 Թողոտ պրքերիդ մեռնիմ:
 Գրանքդ թողտուել ա,
 Կողպէքը ժանգոտել ա,
 Գրանքդ անտէր ա մնացել,
 Էլ ճչ հէր, ճչ մէր ա մնացել:
 Ժամաշապիքդ հանել՝
 Անեխայ շապիկ են հագցրել,
 Քեզ անկտուր տուն են դրել,
 Վայ էս ինչ բան են արել.
 Աստուածանէ կարեց իմ բարին,
 Եարար ինձ խի՞ սէնց արին,
 Զկել սօր գլուխս չոր քարին,
 Հմի էլ թողիւր աչքս արին (արիւն):
 Անուշ բալա, ջան բալա:

Երկրագործի վրայ

Աչքդ խուփ վախտն եմ եկել,
 Անկանդ խուփ վախտն եմ եկել,

Ա՛խ ինչ անեմ որ ինձ լըսես,
 էրուած սրտիս մի դեպ քսես
 Մանգաղը ձեռիցդ ա ընկել,
 Բա՛նը ոտիցդ ա ընկել,
 Մա՛նը իմ մոտիցս ա ընկել,
 Ա՛նը սրտիցս ա ընկել:
 Աշխատեալը փանիդ մատաղ,
 Լաբած գութանիդ մատաղ,
 Աշխատանքիդ, բանիդ մատաղ,
 Լծկանիդ ու կթանիդ մատաղ,
 Յերեկը տուն չես մտել,
 Քշերը քուն չես մտել,
 Ա՛խ ես քու արեւիդ մատաղ,
 Գլուխս գլխիդ սաղաղ:

Հարսը ողջում է սկսարոջը.

Նանի ֆան, նանի ֆան,
 Իմ քեյվանի նանի ֆան.
 Իմ սարի սարուոր նանի ֆան,
 Քաղցը ծծերիդ մեռնիմ, նանի ֆան,
 Անուշ լեզուիդ մեռնիմ, նանի ֆան,
 Իմ երեսի փարդայ, նանի ֆան,
 Իմ կրակի անթեղ, նանի ֆան,
 Իմ դռան փակիչ, նանի ֆան,
 Երեսեքը քեզանայ ա՛ն ունէին, նանի ֆան,
 Վայ թէ էրեսներուս ամօթը փախչի, նանի ֆան,
 Բա ես անա՛ն մնց ապրիմ, նանի ֆան,
 Իմ մեծ կծիկ, նանի ֆան,
 Իմ մեծ ոտտ, նանի ֆան,
 Դուռն էկողին ջուղապ (պատասխան) տուող, նանի ֆան,
 Տուն էկողին պատիւ տուող, նանի ֆան,
 Զուածեղի դօնադն էլ դու գիդէիր, նանի ֆան,
 Աւլիկով սպասինն էլ դու գիդէիր, նանի ֆան.
 Բա որ հիմա դան մնց պատուեմ, որ շնորհակալ ըլլին,
 նանի ֆան:

Բա որ աղջիկդ դայ մէր ուզի,
 Փեսէդ դայ զանքած ուզի,
 Բա ես ինչ ջուղապ տամ, նանի ֆան,
 Մեծ շուաքիդ մեռնիմ, նանի ֆան,

Մեծ շուաքդ կտրուեց, նանի ջան,
 Նամի ջան, նանի ջան,
 Մերան ձեռքով, իրան ոտքով գնացող նանի ջան,
 Վա՛յ թէ քու խաթիր բարեկամներն յետ դառնան, նա-
 նի ջան,

էլ ինձ չճանաչեն, նանի ջան:

Լալիան կանանց հեռացնելով դադարը հանում են եկեղեցուց և դնում դռան առաջ: Այժմ էլ քահանան տիրացուների հետ սկսում է զանձ ասել, չնայելով որ վաղուց այս արդելուած է: Բայց յուզարկաւորողները համբուրում են ննջեցեալի կրծքից և նրա վրայ դրած ափսէի մէջ դրամ ձգում, որը պատկանում է քահանային, իբր վարձատրութիւն դանձ ասելուն. ապա ինչո՞ւ օրինազանց կը գտնուէր:

Վերջապէս ուժով հեռացնում են կանանց և չորս հոգի դադարը ձեռներին բռնած կամ ուտերին դրած տանում են դէպի գերեզմանատուն: Յուզարկաւորողները շուտ շուտ փոխարինում են այդ չորս մարդկանց, որպէսզի շնչեցեալի երախտիքի տակից դուրս գան և թէ տանողները չյոգնին: Գիւկաւր նոյն իսկ Զուլալէրում և Զալաթուլում չկայ:

Կանայք եկեղեցու դռանը մի քիչ էլ լաց լինելուց յետոյ վերադառնում են ննջեցեալի տունը, նրանցից ոչ մինը չի յուզարկաւորում ննջեցեալին մինչև գերեզմանատուն: Տուն վերադառնալով ննջեցեալի շորերն առաջ են բերում, ողբեր ասում, լալիս, և ապա լուացւում ու սպասում տղամարդկանց վերադարձին:

Յուզարկաւորող տղամարդիկ դադարը տանում են դէպի գերեզմանատուն, կէս ճանապարհին վայր դնում, կարգ կառարում, դանձ ասում, խաչհամբոյր ձգում և ապա կրկին վերցնում և տանում դնում գերեզմանի աջ կողմը: Յուզարկաւորութեան միջոցին ամենից առաջ դնում է Ժամակոչը կամ մի ուրիշ անձն՝ դադարի խուփը ձեռին բռնած, լայն ծայրը վերև, նեղը ներքև, ներսի կողմը դէպի իրեն դարձուած: Մրան հետևում են խաչվառ կրող մի կամ երկու տիրացու, ապա քահանան՝ սուրջաւր վերան, և յետոյ արդէն դադարը կրողներն ու յուզարկաւորողները:

Մինչդեռ քահանան կարգ է կատարում, գերեզման փորողները իջեցնում են դազադը գերեզման, իսկ եթէ տառնց դազադի է, ջախտյի (նաշ) մէջ դրած, մի կապերտում փաթաթած, որ սակայն քիչ է պատահում, հանում են ննջեցեալին կապերտից և բռնելով նրա ոտներից և զլխից իջեցնում գերեզման և թրխկալով ձգում մէջը. միայն այս դէպքում ուրիշ երկու հոգի կապերտը կամ երեսքաշը բռնում են գերեզմանի վրայ, որպէսզի պատանքած դիակը շատ աչքի չընկնի:

Քահանան մօտ ազգականի բռի մէջ օրհնում է մի բուռն հող և ձգել տալիս ննջեցեալի վրայ. միւս յուզարկաւորողներն էլ հետևում են նրան և մի մի բուռ հող ձգում վերան ստելով. «Աստուած ողորմի հոգուն»: Ապա գերեզման հատողները հողով լցնում են գերեզմանը և մի թումբ շինում վերան. Թաղման կարգն աւարտելուց յետոյ յուզարկաւորողները ձեռք են տալիս ննջեցեալի մօտիկ անձնաւորութիւններին և ասում. «Աստուած սիրադ մխիթարի», կամ «Աստուծով մխիթարուի»: Յետոյ ննջեցեալի տիրոջ հրաւերով գնում են սգատուն, լուացւում ու նստում հաց ուտելու, այս ճաշը կոչւում է «ծնկնահաց»: Ընդհանրապէս մի եզ են մօրթում և բողբաշ ու փլաւ պատրաստում:

Ճաշի աւարտին «ողորմաթաս» են խմում, բարեմաղթելով, որ Աստուած ողորմի այդ գերդաստանի նոր և հին բոլոր ննջեցեալների հոգիներին և ապա բոլորը կանգնում են ու քահանան, որ սեղանակցում է, հոգեհանգիստ է կատարում: Անմիջապէս տղամարդիկ ցրւում են և կանայք են նստում ճաշելու:

Ճաշ են տալիս նաև գերեզման փորողներին, որոնք երկկոյեան էլ գալիս են ընթերելու և եօթական հաց ստանալու իբր վարձատրութիւն իրենց կրած նեղութեան. եւ այս եօթական հացերը նրանք անշուշտ այդ թաղման երկկոյեան են ստանում, որպէսզի «բահի և թիի ձայնը կտրուի» ննջեցեալի ականջից:

Նոյն երկկոյեան գերեզմանի վրայ կրակ են վառում, որպէսզի «բորենին չգայ և մեռելը հանէ»:

Տանն էլ, այդ երեկոյից սկսած մինչև «եօթը» զիշերները ձէթի ճրագ են վառում, որպէսզի «ննջեցեալի ճանապարհը լոյս լինի»:

Նոյն թաղման երեկոյին բարեկամները երեխաների ձեռքով «սգասեղան» են ուղարկում ննջեցեալի տունը:

Սգասեղանը բաղկացած է լինում հետեանալ կերակրներից կամ խմիչքներից՝ փուռ, տապակած կամ խաշած հաւ, լոբի (եթէ պաս է), գինի և օղի: Այա սգուորի տանից մինը գնում և հրաւիրում է սգասեղան ուղարկողներին և հիւրասիրում նրանց թէ այդ ոտացած և թէ այլ կերակրներով ու խմիչքով:

Թաղման երկրորդ օրը «յիգնաֆողէկ» է:

Առաւելապէս կանայք հաւաքում են սգաուորի տունը և «սգմէրները» հետ գնում գերեզմանատուն, քահանային օրհնել տալիս գերեզմանը, լալիս, ողբեր ասում, և ապա վերադառնում սգատուն, հաց ուտում, ցրում:

Թաղման երրորդ օրը ննջեցեալին լողացնող կանայք գալիս են սգատուն ննջեցեալի շորերը լուանալու: Տանեցիկը ննջեցեալի հանգերձները, գլխարկը կամ գլխի շալը և անկողինը (եթէ այրի է) տալիս են քահանային իբր կողոպուրտ, խկ շապիկը, վարդիկը և գուլպաները՝ լողացնողներին:

Թաղման օրը սգասեղան չբերող բարեկամներն այսօր են բերում, և ստիպում են կանանց գլուխները լուանալ, բայց սովորաբար նրանք, ոչ էլ տղամարդիկ չեն համաձայնում, և մինչև եօթը ծանր սուգ են պահում: Կար չեն անում, ճախարակ չեն մանում, ոչ մի տեղ չեն գնում: Խղամարդիկն էլ չեն սափրում և հազիւ է պատահում, որ գործի գնան:

Թաղման եօթերորդ օրը «եօթն» են տալիս, թէպէտ և պատահում է, որ դանազան, մանաւանդ չքաւորութեան, պատճառով այս «եօթը» յետաձգում է նոյնիսկ մինչև մի տարի:

«Եօթին» սովորաբար պատարագ են մատուցանել տալիս, որին ներկայ են գտնում ննջեցեալի բարեկամները և ապա գալիս են սգատուն հոգու հաց ուտելու: Սովորաբար մորթում են 3—4 ոչխար կամ մի եզն, և եօթը կաթնաներով

կերակուր պատրաստում, որոնցից շորսի մէջ կորկոտ կամ շիլափլաւ, իսկ երեքի մէջ՝ բոզբաշ:

Երբ տղամարդիկ ճաշում վերջացնում են, ս. սեղանը առաջ են բերում:

Ս. Սեղանը մի սկուտեղի մէջ դրած եփած հաւ, մեղր, 7 գալթայ, կարմիր ձուեր, խնձոր, անշուշտ ոչխարի կոնքի ոսկրը (բոլոր ոսկր) խաշած և այլ մրգեղէններ են, մի մի շիշ էլ գինի և օղի:

Ս. Սեղանը պատեցնում են և բոլորը քսում են ձեռքերը սկուտեղին՝ ասելով. Աստուած հոգին լուսաւորէ:

Ապա բոլորը կանգնում են, քահանան հոգեհանգիստ է կատարում, որից յետոյ տղամարդիկ ցրւում են, ու կանայք նստում հաց ուտելու:

Ս. Սեղանը ուղարկւում է քահանայի տունը:

Եօթի հետեւալ օրը, առաւօտեան նորից մօտիկ աղագականները հաւաքւում են սրգատուն, սրգուտրների հետ նախ եկեղեցի և ապա գերեզմանատուն գնում, օրհնել տալիս գերեզմանը և վերադառնում:

Մի քանի օրից կանայք սապոն վերցրած գալիս են սրգատուն, լուանում են սգուտրների և իրենց գլուխները և այնպիսով նրանց սգից հանում: Տղամարդիկն էլ սափրիչի հետ գալիս են և տան տղամարդկանց ու իրենց միսուքները սափրել տալիս:

Քառասունքին կամ տարեցին շատ քչերը, այն էլ միայն հարուստներն են պատարագ մատուցանել տալիս ու հոգուհաց տալիս:

Գլխաւոր մեռելոցներին օրհնել են տալիս բոլոր, հին և նոր ննջեցեալներին՝ գնալով գերեզմանատուն:

Առաջ ուրաթ օրը բարեկամների հետ գնում են գերեզմանը օրհնել տալիս, վերադառնում սրգուտրի տունը և հաց ուտում: Եւր օրը անեկ բազար է գնում, շուրջնաւ Բրիտտոս խաշուած է, խաշը (թթմորը) չեն շարժիլ և մկ էլ անեկ հացը մեռելի բաժինն է:

Ս. Խաշին սրգուտրը իւր մօտիկ աղագականներից ոչխար,

զալժայ, միրզ, խաղող, դեղձ ստանալով, հրաւիրում է նուիրող-ներին և հիւրասիրում նրանց ճաշով, քահանային էլ ժամոց (20 կ.) մի բաժին կերակուր, 2 հաց, 3 մոմ և բաժակի համար մի շիշ գինի է ուղարկում:

Հետեւեալ օրը, մեռելոցին, բարեկամները կրկին հաւաքում են սրգատունը և սրգուերների հետ գնում գերեզմանատուն: Սրգուերը վերցնում է իւր հետ դանազան մրգեր և շաբում գերեզմանի վրայ:

Քահանան գերեզմանը օրհնելուց յետոյ սրգուերը քահանային բաժին է հանում այդ մրգերից և մնացածով հիւրասիրում ներկայ եղողներին. ապա միրանի հատ թողնելով գերեզմանի վրայ, վերադառնում են տուն և ճաշում, ցրում:

Գերեզմանատունը ընդհանրապէս գտնուում է գիւղից դուրս, այլևս ոչ եկեղեցու շուրջը, յաճախ ճանապարհի կողքին: Ծառեր բոլորովին չեն տնկում, և ոչ էլ ծաղիկներ ցանում գերեզմանի վրայ: Ըմէն գերդաստան աշխատում է իւր բոլոր անդամները միմեանց մօտ, նոյն իսկ կից թաղել, և այս պատճառով ամէն ջանք գործ են դնում, որ կարողանան նոյն իսկ շատ հեռու տեղերում վախճանուածներին բերել, գերդաստանական գերեզմանատանը թաղել: Օտարութեան մէջ գեղեցիկների վերջին իղձն ու կտակն էլ յաճախ այդ է լինում՝ հանգչել իւր ծննդավայրում, իւր ծնողների և սիրելիների մօտ:

Գերեզմանները կանոնաւոր շարքերով չեն դասաւորուած, այլ այս ու այն կողմում անկանոն կերպով կուտակուած, իրենց շուրջը նոյն գերդաստան միւս անդամների համար տեղ թողնուած լինելով: Սովորաբար գերեզմանի վրայ հողաթումբ են կանգնեցնում և մի քանի քարեր շարում, իսկ փոքր ի շատէ միջոց ունեցողները՝ գերեզմանաքար են ձգում: Սրանք կամ դադալաձև և կամ քառանկիւնի են լինում, տապանադրով և երբեմն իւր ննջեցեալի և կամ նրա պարտաւան յատկանիշ մի գործիքի պատկերով:

Ուսանձին գերեզմանահատներ չկան, այլ իւրաքանչիւր ննջեցեալի շքաւոր բարեկամները կամ հարեաններն են փորում գերեզմանը, որի համար և իբր վարձատրութիւն եօթական հաց

և ննջեցեալի շորերից են ստանում և սգատանը հաց ուտում:

Գերեզմանը մօտ երկու արշին խորութեան են փորում, և աւարտելիս բան ու թին խաշաձև դնում վերան, որ տատանան ներս շմանի և երբ ննջեցեալին ամփոփելուց յետոյ վերադառնում են՝ բանը հակառակ կողմով են անցկացնում կոթին, որպէսզի ինչպէս անսովոր մի բան է այդպիսի բանը, այնպէս և անսովոր բան, լինի գերեզման փորելը:

Բնակիչները իրենց շնորհակալութեամբ հարգում են իրենց հայրերին և մայրերին, որոնք իրենց հայրերին և մայրերին հարգում են իրենց հայրերին և մայրերին:

Բնակիչները իրենց հայրերին և մայրերին հարգում են իրենց հայրերին և մայրերին:

Բնակիչները իրենց հայրերին և մայրերին հարգում են իրենց հայրերին և մայրերին:



Բնակիչները իրենց հայրերին և մայրերին հարգում են իրենց հայրերին և մայրերին:

Բնակիչները իրենց հայրերին և մայրերին հարգում են իրենց հայրերին և մայրերին: